

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԹԱՐԻԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆՈՒՄ

2. 2. ՄՈՎՈՒԹՅԱՆ

XX դարի 40-ական թթ., երբ Իրանի հասարակական կյանքի ասպարեզում հետզհետե տիրապետող էին դառնում ինքնագիտակցության եկած դեմոկրատական խավերը, հայ-պարսկական գրական առնչությունները թևակոխում են պատմական մի նոր փուլ: Իրանի հոգևոր կյանքում, համաշխարհային գրական գեմքերի հանճարեղ ստեղծագործությունների նկատմամբ ցուցաբերած հետաքրքրության ոլորտում գրական-հասարակական միտքը բարձր դնահատեց նաև հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանին:

1946 թ. Թավրիզ քաղաքում թարգմանիչ Արամայիս Արղումանյանի նախաձեռնությամբ լույս է տեսնում հայ դասական և սովետական շրջանի գրողների անթոլոգիան. այստեղ պարսիկ ընթերցողը ծանոթանում է Վարդեսի արձակ ստեղծագործություններից՝ «Սաադիի վերջին գարունը», «Երջանկության իմաստը», «Զինգիդ-խան», «Ռաբբի Հիլլել» պատմվածքներին¹:

Իրանի առաջավոր մտավորականությունը առաջին անգամ կարդաց Ավ. Իսահակյանին, և հայ բանաստեղծը ընթերցողի հոգուն հարազատ դարձավ ոչ միայն իր խորիմաստ ստեղծագործություններով, այլև իր տրամադրություններով ու ապրումներով:

Միանգամայն իրավացի է գրականագետ Ալիսղար Հաջ-սեիդ Ջավադին, երբ մի առիթով գրում է. «Արևմտանվորտական գրականության հետ տարինի շարունակ ծանոթությունը մի տեսակ միապաղաղություն է ստեղծել մեր մտածելակերպի մեջ՝ մարդկային կյանքի հանդուցային խնդիրները շոշափելիս: Դա խանգարել է մեզ ծանոթանալու մեր հարևան երկրների գրականության հետ: Եվ մինչև այսօր հասարակական կյանքի, իրենց ժողովրդի իղձերի և մարդկային ապրումների նկատմամբ ունեցած նրանց հայացքները մեզ հայտնի չէին»²:

Պարսիկ հասարակայնության կողմից արտակարգ ընդունելություն դտավ Վարդեսի «Աբու-լալա Մահարի» պոեմի թարգմանությունը, որը պարսկերեն երեք անգամ գրվեց ընթերցողների սեղանին³:


داستانهای ادبی—ترجمه: آرامانیس آرزومانیان چاپ دوم، تیریز¹

1325. Անթոլոգիայում ընդգրկված են նաև Նար-Դոսի, Հովհ. Թումանյանի, Վ. Փափազյանի, Գ. Գեմիրճյանի, Մ. Արաղու, Ստ. Զորյանի, Հ. Սիրասի, Հ. Քոչարի ստեղծագործությունները:

کریگور سیراب—هفته داستان، ترجمه: البرت برناردی، تهران²

1325. هفته ص—۱.

³ Առաջին թարգմանությունը պարբերաբար տպագրվել է Իրանում մեծ ժողովրդականություն վայելող «معارف» ամսագրի 5—6 համարներում 1967 թ.: Իսկ 1968 թ. տպագրվել



«Արուստ-լալա Մանարի». 1968 թ. հրատարակության շապիկը

Եվ դա պատահական չէր: «Աբու-լալա Մահարի» պոեմը ժամանակի հակասություններով լի իրականության վիթխարի մի փաստաթուղթ է, մարդկային հոգու ցնցող մի ողբերգություն, որն իր պատմական-ճանաչողական նշանակությունը չկորցնելով՝ այսօր նույնպես համահնչյուն է դառնում սոցիալական անարդարությունների բովում ապրող արևելքի շատ ժողովուրդներին համար:

Իսահակյանը պարսիկ ընթերցողի համար իրավամբ դարձավ այն ջինջ հայելին, որ լնդունելով արևելյան վառ արևի շողերը՝ անդրադարձրեց այն ավելի չերմ, ավելի երանգավորված, Իրանական բանասերները իրենց դրվատանքի խոսքը ասացին համաժողովրդական փառք վայելող հայ բանաստեղծի մասին:

«Ավետիք Իսահակյանը, — գրում է զրականագետ Աբգուլլա Թավաքքուլին, — իր մարդկային հուսախաբությունները պատկերել ու դրսևորել է «Աբու-լալա Մահարի» պոեմի մեջ: Այդ պոեմը ղեղարվեստական մի գլուխգործոց է և թարգմանվել է բազմաթիվ օտար լեզուներով և ամրապնդել է բանաստեղծի միջազգային համբավը: Մակայն, — շարունակում է Ա. Թավաքքուլին, — Իսահակյանի իսկական սիրտն ու ոգին «Աբու-լալա Մահարի» մեջ չպետք է որոնել: Հայ մեծ բանաստեղծի հոգու մեջ ամուր նստած է իր ժողովուրդն ու երկիրը: Իսահակյանը ամենից առաջ ժողովրդական բանաստեղծ է: Նա իր հարազատ ժողովրդի արցունքն ու քրտինքն է խառնել իր երգերին: Նա մեծ մարդասեր է ու նաև ըմբոստ ու խրոխտ հոգի: Մեր այս համոզմունքը հաստատում են նրա «Աղատության զանգը», «Թագմակուլ», «Մեծ հաղթանակի օրը», ինչպես նաև հայրենասիրությանը և ազատությանը նվիրաբերած այն բազմաթիվ բանաստեղծությունները, որոնք կարելի է հայ զրականության դահլիճը համարել»¹:

Պոեզիան խորտակեց հասկացող պարսիկ զրական գեմքերը հայ մեծանուն վարսյաի հետ ունեցած առաջին իսկ շփումից կարողացել են շատ կարճ ժամանակամիջոցում լսող արժանվույն ղեկհատել նրա ստեղծագործության համամարդկային կարևոր նշանակությունը և ղեղարվեստական խոշոր արժանիքները:

«Աբու-լալա Մահարի» պոեմի՝ անձայն փոթորկի միջով քայլող քարավանի ղողանջները անյուրի մնացին Իրանի ղեղարվեստական մտածողության միջոցառում: Հայկական պոեզիան ներթափանցեց պարսկական թարգմանական գրականության մեջ:

Պոեմի թարգմանությանն արձագանքեցին Թեհրանում հրատարակվող «اطلاعات جوانان» (թիվ 79, 1968), «سپید و سحر» (թիվ 27, 1968) պարբերականները:

է «خوشه» շարժական հանդեսի N 544-ում: Այդ նույն տարվա ընթացքում հանդեսի խմբագիր, անվանի բանաստեղծ Ահմադ Շամլուի նախաձեռնությամբ պոեմի թարգմանությունը հրատարակվել է առանձին գրքույկով: Թարգմանությունները իրականացրել են Ալեք Նալատյանը և Հրանտ Դուկասյանը:

شیفتگی و شگفتی های شعر آدمی. روزنامه اطلاعات پنجشنبه ۱۲ تیرماه ۱۳۴۲

Ուշագրավ է, որ պոեմի առաջին պարսկերեն թարգմանությունը հրապարակելուց հետո «شعر»⁵ ամսագրի ղրխավոր խմբագիր, գրականագետ-բանասեր Մահմուդ-Վահիդ Դասվզարդին նույն հանդեսի 1965 թ. 5—6 համարների էջերում պարբերաբար տպագրեց ընդարձակ մի հոդված՝ Վարպետի կյանքի և գրական գործունեության մասին։ Անդրադառնալով «Արու-լալա Մահարի» պոեմի գտած մեծ հաջողությանը, նա գրում է. «Արու-լալա Մահարի» պոեմի տպագրումը «Արմաղան» ամսագրի էջերում գրավեց ինչպես Իրանի, այնպես էլ մեր երկրի սահմաններից դուրս գտնվող գրողների, ինչպես նաև հայ մամուլի ուշադրությունը։ Մենք ևս մեր հերթին, — շարունակում է Մ. Դասվզարդին, — ողջունում ենք հայ մամուլին, շնորհապարտ ենք զգում մեզ և խոստանում ենք, որ հնարավորության սահմաններում ներկայացնենք նաև ուրիշ հայ հեղինակների գործերը, որոնք այնքան սիրողներ և համակրողներ վաստակեցին մեր հասարակության մեջ»⁶։

Հայ բանաստեղծի նկատմամբ տածած ակնածանքն էլ ավելի բացահայտ դարձավ, երբ պարսիկ մտավորականությունը կարգաց Վարպետի լիբիկական տողերը 1968 թ. մեկը մյուսի ետևից Թեհրանում և Սպահանում պարսկերեն թարգմանությամբ լույս տեսած հայ պոեզիայի սովոր առթող գիտնականներում տպագրվեցին Վարպետի «Դարդը սրտիս», «Մայրիկիս», «Ապրում եմ մենակ մարդկանց մեջ օտար», «Մուսլ բանտիս նեղ լուսանցքից», «Մահը», «Կարծես երեկ էր...»⁶ երգերը, որոնց միջոցով պարսիկ ընթերցողը զգաց Բսահակյանի ստեղծագործության պալիտեր, նրա անհուն սիրո թովչանքը դեպի յուրաքանչյուր կենդանի էակ։ Այդ երգերի ջերմության տակ ընկալեց մարդու և ժողովրդի երջանիկ ապրելու իրավունքի կրքոտ պաշտպան հայ բանաստեղծի խոհերը։

«Բսահակյանի պոեզիայի ընդերքը անհատակ խորություն ունի, — գրում է պարսիկ գրականագետ Թեմուր Գորդինը, — նրա «Դարդը սրտիս» երգը հայրենիքից հեռու ընկած, թափառական ու հայրենատենչ յուրաքանչյուր հայի «անձնագիրն» է։ Հանճարեղ քնարերգուի ստեղծագործության մեջ տեղ գտած որոշակի ատելությունը... ուղղված է մարդկության թշնամիների հասցեին»⁷։

Այս արձագանքները անհետևանք չեղան։ Պարսկական գրական մամուլը կարելի է ասել լայնորեն բացեց իր դռները հայ պոեզիայի առաջ։ Հատկապես վերջին տարիներին Թեհրանում պարբերաբար հրատարակվող «بلاغ صائب»⁸ պոեզիայի անթոլոգիան իր յուրաքանչյուր համարում գետն-

⁵ «ارمغان» شماره ۵-۴، تیران ۱۹۶۷. ص ۳۴

⁶ «حماسه اندوه» مجموعه اشعار ارمنی، ترجمه الک، تیران ۱۳۴۷
ص ۳۹: «آبوش». برگزیده‌ای از شعر شاعران ارمنی زبان. دکتر هراند قو کا سیان، تیران ۱۳۴۸. ص ۱۳۱-۱۴۴

⁷ «حماسه اندوه» — ص ۵

⁸ «حماسه اندوه» — ص ۱۰

بر جاده های خلوت بیگانه

کاردوان در ره و آوازی نرم	رسد آمده و پیوسته بخوش
میرود سوی دیار من و من	در دل جاده بیگانه خموش
از بن جاده در این وادی گرم	تا ای می شنوم از دل سنگ
رسد از زادگم آواز	آه، ای قافله سالار درنگ
جز سکوت غم و خاموشی درد	بر لب بادیه گفتار نماند
آدخ این زادگه من، اما	پای را طاقت رفتار نماند
شهر بیگانه و خاموش و خراب	عشق پاک من و آغوش دگر
تکیه بر بوسه و بر عهد خطاست	اشک سوزان نکند هیچ اثر
کاردوان کیست بگو شمع خواند	که در این پهنه خاموش که بود
ز آتش عشق نماند اثری	بجز از حسرت و خاکستر و دود
کاردوان رجعتی از بهر خدای	بسوی جاده بیگانه برآم
هر کجا خسته شدی باز گذار	در کنار خس و خاشاک سرم

«0տար, ամայի ճամփերի վրա» բանաստեղծության պարսկերեն թարգմանությունը:

ղում է հայ բանաստեղծության բնորոշ նմուշներ: Այստեղ մենք բնորոշում ենք Ավ. Իսահակյանի «Սև աշերեն», «Օտար ամայի ճամփեքի վրա» երգերի թարգմանությունները: Հատկանշական է, որ պարսկական դասական պոեզիայի հետևորդ՝ Աբդուհուսեյն Ջալալին խորապես հույզել է մարդկային հոգու պատմությունը վերարտադրող «Օտար, ամայի ճամփեքի վրա» բանաստեղծությունը, որը նա մեծ վարպետությամբ թարգմանել է պարսկերենի (տե՛ս նախորդ էջում):

Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից և հայ պոեզիայից իրականացված պարսկերեն թարգմանությունները գեղես համեմատ քանակ են կազմում, այնուամենայնիվ այդքանն էլ բավական է եղել իրանում մեծ ճանաչում գտած պարսիկ գրականագետ Թեմուր-Գորգինին գրելու. «...Հայ բանաստեղծությունը ամբողջությամբ վերցրած, մարդկային խոհերի, հույզերի ու զգացմունքների զեղարվեստական կախարդիչ արտահայտությունն է: Այն երբեք կյանքի մակերեսի վրա թրթռացող խոսք չէ, որովհետև հայ բանաստեղծը, կյանքին խորաթափանց նայելուց բացի, ուրիշ նպատակ չունի: Այդ բանաստեղծությունը կանգնած է իր դարավոր անցյալի փառապանծ ու անսասան պատվանդանի վրա»⁹:

Պարսիկ առաջավոր մտավորականությունը բարձր է գնահատում վարպետի խոհական անկեղծ մտերմությունը նրա արձակ պոեմի հերոսի՝ Սադիկի հետ, մարդկային հույզերի թարգման Հաֆեզի և աշխարհի վայելքների սիրահար խայյամի հետ: Պարսիկ ժողովուրդը բարձր է գնահատում այն երգչին, որն իր ժողովրդի վիշտն ու բաղձանքները երգելուց բացի, երգել է նաև համաշխարհային վիշտը՝ ծառայելով համայն մարդկության:

ПЕРЕВОД ПРОИЗВЕДЕНИИ АВЕТИКА ИСААКЯНА В ИРАНЕ

Г. О. МОВСИСЯН

(Резюме)

Начиная с 40-х годов нашего столетия представители передовой иранской интеллигенции на страницах своей периодической печати публиковали переводы произведений великого армянского поэта Аветика Исаакяна. Особенно высокую оценку получило в Иране монументальное произведение поэта — «Абу-Лала Маари», перевод которого был опубликован в художественных журналах «Армаган» и «Хуше». В 1967 г. по инициативе известного поэта Ахмада Шамлу (Бамдад) поэма вышла отдельной книгой, в которой дана также биография Исаакяна.

⁹ «حواشیه: ۱. «مقدمه» ص ۵-۶»